ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ

ԲԱԶՈՒՄ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 161-ԱՄՅԱԿԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Բազում բնակավայրի սիրելի բնակիչներ, իմ և ողջ համայնքի անունից շնորհավորում եմ բոլորիդ ձեր չքնաղ բնօրրանի՝ Բազումի 161-ամյակի կապակցությամբ:

Միասին անցած այս տարիների համատեղ աշխատանքը բազմիցս ապացուցել է, որ Բազումցին ամուր կապված է իր հայրենի հողին, նրա բոլոր քայլերն ուղղված են իր տան շենացմանն ու ծաղկմանը:

Այս տարիների ընթացքում Բազում բնակավայրն աննախադեպ աճ է գրանցել տնտեսական, արդյունաբերական, գյուղատնտեսական, մշակութային և հասարակական կյանքի մյուս բոլոր ոլորտներում:

Ձեր բոլորի համատեղ ջանքերի և նվիրվածության արդյունքում Բազում բնակավայրի բնակիչն այսօր ապրում է բարեկեցիկ և արժանապատիվ կենսակերպով, ինչը Փամբակ համայնքի և նրա յուրաքանչյուր բնակչի հաղթանակն է:

Սիրելի բնակիչներ, լիահույս եմ, որ հաջորդող տարիներին տեսնելու ենք Բազում բնակավայրի ոչ միայն տնտեսական, այլև ժողովրդագրական աճը, իսկ ձեր ողջ ներուժը շարունակելու է ծառայել մեր համայնքի ու հայրենիքի զարգացմանը:

Շարունակեք շենացնել և պահպանել ձեր տունը:

Հարգանքներով՝ Սուրեն Կոստանդյան